

«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
30 ապրիլի 2003 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 ապրիլի 2003 թվականի N 413-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱՊԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ՊԱՀՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՄՆՆԴԻ ՕՐԱԿԱՆ ՄԻՋԻՆ ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐԸ, ՀԱՆԴԵՐՁԱՆՔԻ ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ԱՆԿՈՂՆԱՅԻՆ ՈՒ ՀԻԳԻԵՆԻԿ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդամթերքով, հանդերձանքով, անկողնային ու հիգիենիկ պարագաներով ապահովելու պայմանները բարելավելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը **որոշում է**.

1. Հաստատել՝

ա) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց սննդի օրական միջին չափաբաժինները՝ համաձայն N 1 հավելվածի.

բ) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց հանդերձանքի չափաբաժինները և դրանց շահագործման ժամկետները՝ համաձայն N 2 հավելվածի.

գ) Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական հիմնարկներում պահվող անձանց անկողնային և հիգիենիկ պարագաների չափաբաժիններն ու դրանց շահագործման ժամկետները՝ համաձայն N 3 հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի նոյեմբերի 11-ի «Հայաստանի Հանրապետության հատուկ սպառողների սննդի օրական միջին նորմաների մասին» N 706 որոշման 3-րդ կետը և 1999 թվականի մարտի 2-ի «Հայաստանի Հանրապետության հատուկ սպառողների հանդերձանքի նորմաների մասին» N 107 որոշման 1-ին կետի «բ» ենթակետը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

**Հայաստանի Հանրապետության
վարչապետ**

Ա. Մարգարյան

2003 թ. ապրիլի 21
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2003 թվականի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ՊԱՀՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՄՆՆԴԻ ՕՐԱԿԱՆ ՄԻՋԻՆ ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐԸ

NN ը/կ	Անվանումը	Չափի միավորը	Քանակը
1.	Հաց	գրամ	650
2.	Չավարեղեն	գրամ	120
3.	Մակարոնեղեն	գրամ	30
4.	Միս, մսամթերք (միս` ոսկորով)	գրամ	90 (180)
5.	Կաթ (կաթի փոշի)	գրամ	100 (14.3)
6.	Ձուկ (առանց գլխի)	գրամ	100
7.	Կենդանական յուղ, մարգարին	գրամ	45
8.	Շաքար, շաքարավազ	գրամ	40
9.	Կերակրի աղ	գրամ	20
10.	Թեյ (թեյաբույսեր)	գրամ	2
11.	Տոմատի մածուկ	գրամ	5
12.	Դափնետերև	գրամ	0.1
13.	Կարտոֆիլ	գրամ	550
14.	Այլ բանջարեղեն	գրամ	250
15.	Հյութեր	գրամ	100
16.	Պանիր	գրամ	25
17.	Միրգ	գրամ	200
	Հիվանդներին տրվող հավելյալ սննդի չափաբաժինները		
1.	Բուսական յուղ	գրամ	20
2.	Կարագ	գրամ	25
3.	Կաթ (կաթի փոշի)	գրամ	100
4.	Հավի ձու	հատ	1

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովույան

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2003 թվականի
ապրիլի 10-ի N 413-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ՊԱՀՎՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՆԴԵՐՉԱՆՔԻ ՉԱՓԱԲԱԺԻՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

NN ը/կ	Անվանումը	Չափի միավորը	Քանակը	Շահագործման ժամկետը (տարի)
-----------	-----------	-----------------	--------	-------------------------------

1.	Տղամարդու բամբակյա կոստյում	լրակազմ	2	1
2.	Տղամարդու բանվորական կոստյում	լրակազմ	1	1
3.	Տղամարդու բամբակյա վերնաշապիկ	հատ	2	1
4.	Տղամարդու ներքնազգեստ	լրակազմ	2	2
5.	Տղամարդու բամբակյա շապիկ	հատ	4	1
6.	Տղամարդու վարտիք	հատ	4	1
7.	Անդրավարտիքի գոտի	հատ	1	2
8.	Տղամարդու կաշվե կիսաձտքավոր կոշիկ	զույգ	1	2
9.	Տղամարդու կոշիկ	զույգ	1	1
10.	Տղամարդու բամբակյա կիսագուլպա	զույգ	6	1
11.	Բամբակյա անդրավարտիք	հատ	1	1
12.	Բամբակյա գլխաշոր՝ գործվածքից	հատ	2	2
13.	Կնոջ բաճկոն՝ աստառապատ	հատ	1	2
14.	Բամբակյա զգեստ-կոստյում	լրակազմ	1	1
15.	Զգեստ՝ բամբակյա գործվածքից	հատ	1	1
16.	Կնոջ վերնաշապիկ՝ բամբակյա գործվածքից	հատ	2	1
17.	Բամբակյա խալաթ	հատ	1	1
18.	Կնոջ շապիկ	հատ	4	1
19.	Կրծկալ	հատ	4	1
20.	Կնոջ վարտիք	հատ	6	1
21.	Կնոջ բամբակյա կիսագուլպա	զույգ	2	1
22.	Բամբակյա գուլպա (զուգազուլպա)	զույգ	4	1
23.	Կնոջ կաշվե կիսաձտքավոր կոշիկ	զույգ	1	2
24.	Կնոջ կոշիկ	զույգ	2	1
25.	Զմեռային գլխարկ	հատ	1	2
26.	Ամառային գլխարկ	հատ	1	1
27.	Կիսաբրդյա ձեռնոց	զույգ	1	1
28.	Բամբակյա շարֆ	հատ	1	2
29.	Բամբակյա կիսավերարկու	հատ	1	2
30.	Հողաթափիկ, մաշիկ	զույգ	1	1

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովուզյան

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2003 թվականի
ապրիլի 10-ի N 413-Ն որոշման

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ՊԱՀՎՈՂ ԱՆՁԱՆՑ ԱՆԿՈՂՆԱՅԻՆ ՈՒ ՀԻԳԻԵՆԻԿ
ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ԶԱՓԱԲԱԺԻՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ**

NN	Անվանումը	Չափի	Քանակը	Շահագործման
----	-----------	------	--------	-------------

ը/կ		միավորը		Ժամկետը
I. Անկողնային պարագաներ				
1.	Ծածկոց	հատ	1	2 տարի
2.	Ներքնակ	հատ	1	2 տարի
3.	Բարձ	հատ	1	2 տարի
4.	Մավան	հատ	4	1 տարի
5.	Բարձի երես	հատ	2	1 տարի
6.	Երեսարբիչ	հատ	4	1 տարի
7.	Հիգիենիկ սրբիչ	հատ	2	1 տարի
II. Հիգիենիկ պարագաներ				
1.	Օճառ՝ տնտեսական	գրամ	200	ամսական
2.	Օճառ՝ ձեռքի	գրամ	100	ամսական
3.	Լվացքի փոշի (մեկ կգ լվացքի հաշվարկով)	գրամ	40	ամսական
4.	Սպասք լվանալու նյութեր	գրամ	30	ամսական
5.	Ատամի մածուկ	գրամ	50	ամսական
6.	Ատամի խոզանակ	հատ	1	1 տարի
7.	Զուգարանի թուղթ	հատ	1	ամսական
8.	Մեկանգամյա օգտագործման սափրոդ սարք	հատ	3	ամսական
9.	Կնոջ հիգիենիկ պարագա	հատ	10	ամսական

(Հավելվածը փոփ. 12.01.12 N 6-Ն)

**Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Մ. Թովուզյան